ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 291 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՌԵԵՍՏՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2026թ. փետրվարի 12-ի N 152-Ն որոշումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմում ձևավորել տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների ռեեստր (այսուհետ՝ ռեեստր):

2. Ռեեստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանում սահմանել ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությունը:

3. Ռեեստրի վարման համար պատասխանատու անձ (ռեեստր վարող) նշանակել ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Մարիաննա Աղախանյանին:

4. ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի աշխատակիցներին (տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվներից օգտվողներին)՝ ռեեստր վարողի համար ապահովել հասանելիություն՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը հավաքելու և տվյալների ճշգրտությունն ապահովելու համար:

2026-06-18 12:29:36 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետ Ռ. Ղուկասյան

2026թ. հունիսի 18
Ք. Կապան